ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՀՄԱԾՁԲ-2026/37

ք. Երևան «01» VI 2026թ.

Առողջապահության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռելեվանտ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ս.Բաղդյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի գլխավոր տնօրենի թափուր հաստիքի համար համապատասխան մասնագետների որոնման և ներկայացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվել սույն Պպայմանագրի կատարումից, եթե Պատվիրատուն չի կատարում դրանով սահմանված իր պարտավորությունները կամ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, ներառյալ՝ Կատարողին հայտնի է դարձել Պատվիրատուի վերաբերյալ այնպիսի տեղեկություններորոնք անհնար են դարձնում սույն Պայմանագրի կատարումը դրանով սահմանված պայմաններով:

2.3.3 Միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրի կատարումից, եթե թեկնածուներ ներկայացնելուց հետո Պատվիրատուն 30 օրվա ընթացքում չի հանդիպում ներկայացված թեկնածուների հետ և չի ներկայացնում դրա հիմնավորումը:

2.3.4. Միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրի կատարումից, եթե Պատվիրատուն թեկնածուների հետ հանդիպումից հետո 30 օրվա ընթացքում չի տրամադրում թեկնածուների վերաբերյալ հետադարձ կապ կամ, չի հայտնում նոր թեկնածուներ դիտարկելու իր ցանկության մասին:

2.3.5. Պահանջել լրացուցիչ վճար կամ կնքել նոր պայմանագիր, եթե Պատվիրատուն պայմանագրի կնքումից հետո այնպես է փոխել պահանջները, որ դրա հետևանքով կարող է փոփոխվել թեկնածուների նախնական ցանկը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Առողջապահության նախարարություն	«ՌԵԼԵՎԱՆՏ» ՍՊԸ
Կառավարական տուն 3	Հասցե ք.Երևան, Նանսենի փ.,5/3 շ., բն. 29
ՖՆ գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02507171	Հ/Հ՝ 22041012768600[illegible]
	ՀՎՀՀ՝ 00928747
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« » 2026թ. կնքված
ՀՀ ԱՆ ՀՄԱԾՁԲ-2026/37 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**տեխնիկական բնութագիրը**	**չափման միավորը**	**ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ/**	**ընդհանուր քանակը**	**Մատուցման ժամկետը**
1	79411140	կից հավելվածով	դրամ	10,000,000	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրերի ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ՝ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՌԵԼԵՎԱՆՏ» ՍՊԸ
Հասցե ք.Երևան, Նանսենի փ.,5/3 շ., բն. 29
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220410127686000
ՀՎՀՀ՝ 00928747

/ստորագրություն/
Կ.Տ

Կից հավելված

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Կատարողը, հիմնվելով իր փորձի և աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկացվածության վրա, մատուցում է առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի գլխավոր տնօրենի թափուր հաստիքի համար համապատասխան մասնագետների որոնման և ներկայացման ծառայություններ:

Կողմերը պարտավորվում են թեկնածուների դիտարկման ողջ ընթացքում միմյանց տրամադրել թեկնածուների վերաբերյալ լիարժեք, թափանցիկ և բովանդակային հետադարձ կապ, ներառյալ կարծիքները, դիտարկումները և առարկությունների հիմքերը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Կատարողը սահմանված պահանջներին համապատասխան իրականացնում է աշխատաշուկայի հետազոտություն, ուսումնասիրում է տարբեր տվյալների բազաներ և վարում մասնագիտական քննարկումներ, որի արդյունքում ձևավորվում է պոտենցիալ թեկնածուների նախնական ցանկը: Պատվիրատուի և Կատարողի միջև լրացուցիչ պայմանավորվածության դեպքում Կատարողը կարող է Պատվիրատուին տրամադրել ցանկում ներառված առանձին մասնագետների վերաբերյալ տեղեկություն, որպեսզի Պատվիրատուն համոզվի, որ որոնման ռազմավարությունն ընտրվել ու իրականացվում է պատշաճ:

Կատարողը սահմանված պահանջներին համապատասխանող առնվազն 3 թեկնածուների ցանկը ներկայացնում է Պատվիրատուին՝ հետագա հանդիպումների համար: Կատարողը՝ թեկնածուներին Պատվիրատուին ներկայացնելիս, տրամադրում է նրանց ինքնակենսագրականը:

Կատարողը մասնագետներ փնտրելու և ներկայացնելու ժամանակ իրավունք ունի չդիտարկել բոլոր հնարավոր թեկնածուներին և ընտրել լավագույններին: Կատարողը պարտավոր է ներկայացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան թեկնածուների՝ հիմք ընդունելով իր փորձը, տեղեկացվածությունը աշխատաշուկայից, որոնք կրում են սուբյեկտիվ բնույթ:

Կատարողն ինքնուրույն է կազմակերպում և համակարգում Պատվիրատուի ներկայացուցիչների և թեկնածուների միջև հարցազրույցները, քննարկումները և աշխատանքի առաջարկի քննարկման գործընթացը:

Եթե Պատվիրատուն առարկում է թեկնածուներից մեկի կամ մի քանիսի՝ սահմանված չափորոշիչներին համապատասխան լինելուն, ապա այդ մասին Կատարողին ներկայացնում է մանրամասն հիմնավորում:

Եթե Կատարողին չի հաջողվում Պատվիրատուին ներկայացնել սահմանված պահանջներին համապատասխան թեկնածուներ պայմանագրով սահմանված ժամկետում, ապա իր նախաձեռնությամբ կամ Պատվիրատուի պահանջով ներկայացնում է հաշվետվություն՝ նշելով կատարված աշխատանքի ծավալը և թեկնածուներ չներկայացնելու պատճառները: Կողմերը քննարկում են նշված պատճառները և որոշում են կայացնում սահմանված չափորոշիչներում փոփոխություններ կատարելու, որոնումը շարունակելու կամ համագործակցությունը դադարեցնելու նպատակահարմարության վերաբերյալ:

Պատվիրատուի ցանկությամբ, Կատարողը, իր փորձի և հնարավորությունների սահմաններում, տրամադրում է խորհրդատվություն և աջակցություն՝ թեկնածուի հետ աշխատավարձի և աշխատանքային այլ պայմանների շուրջ բանակցությունների ընթացքում:

Պատվիրատուն ազատ է չընտրել որևէ թեկնածուի, սակայն եթե չի պահանջել նոր թեկնածուների ներկայացում, ապա Կատարողը այլևս պարտավոր չէ ներկայացնել նոր թեկնածուներ:

Ապահովել Պատվիրատուի կողմից տրամադրված, ինչպես նաև սույն Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը և այն չբացահայտել երրորդ անձանց: Ընդ որում, Կողմերը համաձայնում են, որ պոտենցիալ թեկնածուները, որոնց հետ Կատարողը վարում է նախնական քննարկումներ, սույն կետի իմաստով երրորդ անձինք չեն համարվում, իսկ այն այն տեղեկատվությունը, որը ենթակա է գաղտնի պահպանման նաև պոտենցիալ թեկնածուներից, Կատարողը պարտավոր է տրամադրել Պատվիրատուին այդ մասին հատուկ նշումով:

Կատարողը պարտավորվում է չդիտարկել որպես թեկնածու և աշխատանքի առաջարկ չանել այն մասնագետներին, որոնք ներկայացվել են իր կողմից, ընտրվել են Պատվիրատուի կողմից և շարունակում են աշխատել Պատվիրատուի մոտ՝ նրանց աշխատանքի ընդունվելու օրվանից առնվազն 4 տարի, պայմանով, որ Պատվիրատուն ժամանակին ամբողջությամբ կատարել է իր պարտավորությունները Կատարողի նկատմամբ:

Կողմերը գիտակցում են, որ չնայած Կատարողը պարտավորվում է անել առավելագույնը նշված հաստիքն արդյունավետ լրացնելու համար և պատրաստ է կրել պայմանագրով նախատեսված

տույժ տուգանքները, սակայն կան հանգամանքներ, որոնք դուրս են նրա ազդեցությունից, ինչպիսիք են՝ թեկնածուների և Պատվիրատուի որոշումները և դրանց փոփոխությունները:
Կատարողը Պատվիրատուի հանդեպ չի կրում պայմանագրից դուրս որևէ պարտավորություն, այդ թվում՝ վնասի հատուցման, եթե Պատվիրատուին վնաս է պատճառվել նրա կողմից ընտրված թեկնածուի գործողությունների կամ անգործության հետևանքով:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Պատվիրատուն պայմանագրի գումարից 2 500 000 դրամը վճարում է Կատարողին, հնարավոր թեկնածուների ցանկը առնվազն մեկ անգամ ներկայացնելուց հետո:
Պայմանագրի մնացած մասը՝ 7 500 000 դրամը ենթակա է վճարման, երբ Կատարողի կողմից ներկայացված որևէ թեկնածուի հետ Պատվիրատուն կնքում է աշխատանքային պայմանագիր կամ ցանկացած այլ հիմքով սկսում է գործնական հարաբերություններ:
Եթե ներկայացված հնարավոր թեկնածուների ընտրությունը Պատվիրատուի կողմից կատարվի 2027թ., ապա Կողմերի համաձայնությամբ պայմանագիրը կարող է երկարացվել և 7 500 000 դրամը վճարումը կկատարվի 2027թ.:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Առողջապահության նախարարություն	«ՌԵԼԵՎԱՆՏ» ՍՊԸ
Կառավարական տուն 3	Հասցե ք.Երևան, Նանսենի փ.,5/3 շ., բն. 29
ՖՆ գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
	Հ/Հ՝ 220410127686000
ՀՎՀՀ՝ 02507171	ՀՎՀՀ՝ 00928747
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1.1
«01» VI 2026թ. կնքված պայմանագրի

Չափանիշներ
Գլխավոր տնօրենի փորձի նկատմամաբ պահանջները

1. Լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացի, տիրապետի հայերենին, իսկ դիմումը ներկայացնելու կամ մրցութային ընտրության անցկացման օրվա դրությամբ լինի առնվազն 35 տարեկան:
2. Ունենա Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանող հետևյալ որակավորումներից մեկը.

- «Հաշվապահություն և հարկային գործ» կամ «Ֆինանսներ» մասնագիտությամբ տնտեսագիտության մագիստրոս,
- կամ «Կառավարում» կամ «Շուկայագիտություն» մասնագիտությամբ կառավարման մագիստրոս,
- կամ «Բիզնես վարչարարություն» մասնագիտությամբ տնտեսագիտության մագիստրոս:

3. Ունենա առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ ապահովագրության, ֆինանսների կամ առողջապահության կառավարման ոլորտում:
4. Դիմելու պահին իրականացնի իր մասնագիտական որակավորմանը համապատասխանող աշխատանքային գործունեություն:

Փնտրման սահմանափակումները

1. Դիմելու պահին և դրան նախորդող առնվազն երեք տարիների ընթացքում զբաղեցրած չլինի պաշտոն ապահովագրական, բժշկական օգնություն և սպասարկում, դեղատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունում, ինչպես նաև դեղերի կամ բժշկական արտադրատեսակների ներմուծմամբ, արտահանմամբ կամ արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձում կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ:
2. Դիմելու պահին չհանդիսանա ապահովագրական, բժշկական օգնություն և սպասարկում, դեղատնային գործունեություն իրականացնող կազմակերպության, ինչպես նաև դեղերի կամ բժշկական արտադրատեսակների ներմուծմամբ,

արտահանմամբ կամ արտադրությամբ զբաղվող առևտրային կազմակերպության մասնակից, բաժնետեր կամ փայատեր:

3. Դիմելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում եղած չլինի սնանկացման պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության գործադիր մարմնի ղեկավար:
4. Թեկնածուն չպետք է՝

- դատապարտված լինի դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, եթե դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,
- դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված լինի անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- ունենա օրենքով սահմանված այլ սահմանափակումներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ՝ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՌԵԼԵՎԱՆՏ» ՍՊԸ
Հասցե ք.Երևան, Նանսենի փ.,5/3 շ., բն. 29
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220410127686000
ՀՎՀՀ՝ 00928747

/ստորագրություն/
Կ.Տ

«ՌԵԼԵՎԱՆՏ»
"РЕЛЕВАНТ"
"RELEVANT"
00928747

Հավելված N 2
« » 2026թ. կնքված
ՀՀ ԱՆ ՀՄԱԾՁԲ-2026/37 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ.՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79411140	Մարդկային ռեսուրսների կառավարման խորհրդատվական ծառայություններ							10 000 000	10 000 000	10 000 000	10 000 000	10 000 000	10 000 000	***10 000 000***

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ՝ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՌԵԼԵՎԱՆՏ» ՍՊԸ
Հասցե ք.Երևան, Նանսենի փ.,5/3 շ., բն. 29
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220410127686000
ՀՎՀՀ՝ 00928747

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«- » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. S. (առկայության դեպքում)

«--» 20 թ.